ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ /ՍԽԵՄԱ/ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ /ՇԻՆ./ ՀԱՄԱՐ

Ներկայացվում է համաձայնեցման՝ ինժեներական ենթակառուցվածքների սեփականատերերի /օգտագործողների/ հետ, իրենց կողմից՝ գծապատկերված հողամասում շահագործվող կոմունիկացիաների բացակայության և դրանց անվտանգության գոտիներում ընդգրկված չլինելու վերաբերյալ

Սույն իրադրությանփատակագիծը /սխեման/ կազմվել է իմ ....ի կողմից տրված տվյալների հիմանայ, որի համար ստորագրում եմ .....

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ
«ՆՈՐՔ» ՇՀ
ՀԿՀՀ / 01520882

ԵՐԵՎԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ 02655115

ՀՈՂԱՄԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ՝
հասցեն՝ Համայնք Աբովյան, գյուղ Առինջ,
Պետրոս Դուրյան թաղամասի
1-ին փողոց, թիվ 26 հողամաս
ծածկագիրը՝ 07-011-0401-0014

11.04.2024թ

ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

«ՎԵՌԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ, «ՀԷՑ» ՓԲԸ, «ԲԷՑ» ՓԲԸ, «ՊԱՇՊՈՐՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ

13.02.24թ 07.01.24թ

ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Քաղաքաշինության, հողաշինարարության,
գյուղատնտեսության և անշարժ գույքի
կառավարման բաժնի պետ՝

Ե. ԱՎԵՏԻՍՅԱՆ .....
(ստորագրություն)

«04» 02 2024թ. Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, Երևան 0010, Վարդանանց 13ա
Հեռ.՝ 010 54 03 26, Ֆաքս՝ 010 54 06 13
Էլ.փոստ՝ scws@scws.am
Վեբ կայք՝ scws.am

«01» Խուլիս 2024թ.

N 03/05/3220-2024

ՔԱՂԱՔԱՑԻ ՍԻՐՎԱՐԴ ՄԱՐՏՈՅԱՆԻՆ
Հասցե՝ ք.Երևան, Նոր-Նորք, 4-րդ զանգված,
Բակունցի փողոց, շենք 9, բնակարան 7
Հեռախոս՝ 094 64 51 15

Հարգելի տիկին Մարտոյան

Ի լրումն Ջրային կոմիտեի 05.06.2024թ. N03/05/2787-2024 գրության՝ տեղեկացնում ենք, որ պետական սեփականություն հանդիսացող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հետագա պահպանման և շահագործման գործընթացներն ապահովելու՝ կամավոր սերվիտուտ սահմանելու կամ այլ լուծումներ առաջարկելու համար ստեղծված աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրվել է Ձեր դիմումը:

Կոտայքի մարզի Առինջ համայնքի Պ.Դուրյան թաղամաս 1-ին փողոց 26 հասցեի հարակից հանրային տարածքով անցնում է D=500մմ ջրատար:

Ելնելով տեղային պայմաններից և հաշվի առնելով այն, որ դրա շրջանցման արդյունքում չի պահպանվի ջրային համակարգի օգտագործման, վերականգնման և պահպահման, ինչպես նաև անվտանգ շահագործման համար նախատեսված շերտագիծը՝ որոշվեց առաջարկել կնքել կամավոր սերվիտուտի պայմանագիր՝ ապահովելով հողամասի սահմանագծից դեպի ներս 2 մետր լայնությամբ շերտագիծ:

Կից ներկայացվում է պայմանագրի կնքման համար Ձեր կողմից նախապատրաստական աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտ ցանկը և պայմանագրի օրինակելի ձևը:

Առդիր՝ 2 նիշք:

Recoverable Signature

X

ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Signed by: GHAZARYAN ARTAK 1403750092

Հարգանքով՝ ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Կատարող՝ Հ.Հակոբյան
Իրավաբանական բաժին
Հեռ.՝ (+37410) 54 05 92

ՑԱՆԿ

կամավոր սերվիտուտի պայմանագիր կնքելու
նախապատրաստական աշխատանքների

1. Սեփականատիրոջ անձնագիր կամ նույնականացման քարտ (բնօրինակ):

2. Սեփականության վկայական (բնօրինակ):

3. Եթե սեփականատերը ամուսնացած է, և գույքը ձեռք է բերվել համատեղ կյանքի ընթացքում՝ ՔԿԱԳ (զագս) վկայական և ամուսնու նոտարով հաստատված սերվիտուտ կնքելու գրավոր համաձայնությունը:

4. Եթե սեփականության վկայականով կան նաև անչափահաս համասեփականատերեր՝ համայնքապետարանից թույլտվություն:

5. Եթե հողմասը գրավադրված է՝ սերվիտուտ կնքելու բանկի համաձայնությունը:

6. <<Վեոիա ջուր>> ՓԲԸ-ի կողմից տրված շրջանցման տեխնիկական պայման (գործող):

7. Լիցենզավորված չափագրողի կողմից տրված (լիցենզիայի պատճենը կցել) հողամասի հատակագիծ՝ նշելով սերվիտուտով առանձնացվող տարածքը և խողովակի իրական դիրքը՝ պահպանելով գրությամբ նշված շերտագծի չափը:

8. Կադաստրի կողմից տրված միասնական տեղեկանք:

ԿԱՄԱՎՈՐ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՍԵՐՎԻՍՈՒՏԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ

ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՔՍԱՆՉՈՐՍ ԹՎԱԿԱՆԻ ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ի դեմս՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտե պետական մարմնի, գտնվելու վայրը՝ ք.Երևան, Վարդանանց 13Ա, (այսուհետ՝ նաև ՋՋ համակարգի կառավարման լիազոր մարմին),ի դեմս գլխավոր քարտուղար Արտակ Ղազարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, որի անունից համաձայն ----------/2024 թվականին տրված՝ N _____ լիազորագրով հանդես է գալիս ՀՀ քաղաքացի _____ԱԱՀ, ծնված՝ _____-ին, ՀԾՀ՝ _____, անձնագիր՝ _____, տրված՝ _____-ի կողմից, _____-ին, հաշվառված՝ _____,

Անշարժ գույքի սեփականատեր (այսուհետ՝ Գույքի սեփականատեր)՝ ՀՀ քաղաքացի/ներ ----------, մյուս կողմից

միասին հիշատակման դեպքում՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1.----------ս հավաստում եմ, որ՝ ---------- հասցեում գտնվող անշարժ գույքը, բաղկացած՝ -------- հա մակերեսով սեփականություն հանդիսացող հողամասից և --------հա մակերեսով այլ անշարժ գույքից, նպատակային նշանակությունը՝------- այսուհետ՝ Անշարժ գույք ----------, ----------թ. տրված ----------, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով, գաղտնաբառ՝ ----------, սեփականության իրավունքով պատկանում է ----------ԻՆ:

1.2 Սույն պայմանագիրը կնքելու պահին Անշարժ գույքը գրանցված սահմանափակումներ չունի, համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից ---------- թվականին տրված ---------- միասնական տեղեկանքի, գաղտնաբառ՝ ----------:

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ՝ ----------

1.3. Գույքի սեփականատերը տեղյակ է, որ Գույքը տեղակայված (կառուցված) է այն հողատարածքի վրա, որը ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ և ՀՀ ջրային օրենսգրքի 4-րդ հոդվածների համաձայն՝ քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցման ենթակա չէ:

1.4. Սույն Պայմանագրով Գույքի սեփականատերը ջրամատակարարման և ջրահեռացման (այսուհետ՝ ՋՋ) համակարգի կառավարման լիազոր մարմնին անվճար տրամադրում է սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույքից սահմանափակ օգտվելու իրավունք՝ ՋՋ համակարգի բնականոն շահագործման, սպասարկման ու պահպանման նպատակով:

1.5. Կողմերը ընդունում են, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքն այլ անձի փոխանցելիս սերվիտուտը պահպանվում է, որի վերաբերյալ անհրաժեշտության դեպքում կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

1.6.Կողմերն ընդունում են, որ Պայմանագրով սահմանված կամավոր սերվիտուտ սահմանելու դրույթները տարածվում են Գույքի սեփականատիրոջ ------- մակերեսով ընդհանուր հողատարածքի (այլ անծարժ գույքի) վրա, որի միջով անցնում է d= ------ ---մմ (նյութը) ջրագիծ (կոլեկտոր)՝ իր հանգույցներով, համաձայն կցվող հատակագծի:

1.7.Գույքի սեփականատիրոջ կողմից կից ներկայացվող սերվիտուտով ծանրաբեռբված անշարժ գույքի լիցենզավորված չափագրողի կողմից չափագրված հատակագիծը՝ սերվիտուտի տեղակայման նշումով, հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

1.8. Կողմերը հնարավոր են համարում և նախատեսում են ՋՋ համակարգի վնասվածքը և դրա արդյունքում գույքային վնասի պատճառումը, ինչպես նաև վերանորոգման անհրաժեշտությունը, ինչպես նաև գնահատում են այն իրավիճակը, որ Շահագործողը Գույքի և Գույքի սեփականատիրոջ իրավունքների առկայությամբ պայմանավորված, օբյեկտիվորեն զրկվում է ՋՋ համակարգը սպասարկելու հնարավորությունից:

1.9. Սույն Պայմանագրով Կողմերը սահմանում են Գույքի սեփականատիրոջ՝ Գույքի օգտագործման, տիրապետման, տնօրինման, շահագործման կամ կառուցապատման ընթացքում ՋՋ համակարգին հասցվելիք վնասի կամ ՋՋ համակարգի վնասվածքի արդյունքում այլ անձանց պատճառված վնասի հատուցման պատասխանատվությունը:

2.Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Գույքի սեփականատերը պարտավոր է.

2.1.1. Ձեռնպահ մնալ այնպիսի գործողությունների կատարումից, որոնք որևէ կերպ կարող են վնաս պատճառել ՋՋ համակարգին:

2.1.2. ՋՋ համակարգի վնասվածքի, վթարի դեպքում անհապաղ տեղեկացնել Շահագործողին:

2.1.3. ՋՋ համակարգի վնասվածքի դեպքում՝ թույլատրել Շահագործողի աշխատակիցների և տեխնիկայի մուտքն իր տարածք՝ ՋՋ համակարգը զննելու և վթարի, վնասվածքի պատճառները պարզելու և վթարը վերացնելու համար:

2.1.4. Չխոչընդոտել վթարի վերացմանն ուղղված Շահագործողի գործողություններին:

2.1.5. Իր մեղքի առկայությամբ, ՋՋ համակարգի վնասվածքի (վթարի) արդյունքում ՋՋ համակարգի կառավարման լիազոր մարմնին և/կամ Շահագործողին, կամ այլ անձանց պատճառված վնասների հատուցման համար գույքի սեփականատերը կրում է (կկրի) լիակատար պատասխանատվություն:

2.1.6. Ապահովել անխափան շուրջօրյա մուտքը դեպի սերվիտուտի շերտագիծ:

2.1.7. ---------- հասցեում գտնվող հողամասի՝ --------- տարածքի վրա, առաջիկա ցանկացած քաղաքաշինական գործունեության ժամանակ նախագծային և շինարարական աշխատանքների ծավալներում ներառել նաև d=----------մմ (նյութը) ջրագիծ (իր հանգույցներով)՝ շահագործման տիրույթ ստեղծելու անհրաժեշտ պայմաններ, համաձայն կից ներկայացված հատակագծի: Շահագործման լիարժեք տիրույթ ստեղծելու համար գույքի սեփականատերը պարտավոր է անհրաժեշտության և տեխնիկական հնարավորության դեպքում իրականացնել ջրատարի շրջանցման աշխատանքներ, ինչպես նաև մինչև նշված հասցեում ցանկացած շինարարական աշխատանքների իրականացումը բոլոր նախագծային փաստաթղթերը նախապես համաձայնեցնել ՋՋ համակարգի կառավարման լիազոր մարմնի և Շահագործողի հետ:

2.1.8. Կատարել Պայմանագրի նոտարական վավերացման և դրանից բխող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը:

2.2 Գույքի սեփականատերն իրավունք ունի.

2.2.1 Տեղյակ լինել /ներկա գտնվել/ ՋՋ համակարգի վթարի վերացմանն ուղղված Շահագործողի կողմից ձեռնարկվող միջոցառումներին:

2.3 ՋՋ համակարգի կառավարման լիազոր մարմինը պարտավոր է.

2.3.1 ՋՋ համակարգի վերակառուցմանը կամ բարելավմանն ուղղված պետական ներդրումների իրականացման դեպքում ապահովել Գույքի սեփականատիրոջ և Շահագործողի իրազեկումը:

2.3.2 Միջնորդի դեր ստանձնել Շահագործողի և Գույքի սեփականատիրոջ միջև Պայմանագրի դրույթներից բխող բանակցային գործընթացում:

2.4 ՋՋ համակարգի կառավարման լիազոր մարմինն իրավունք ունի.

2.4.1 Նախապես Գույքի սեփականատիրոջը իրազեկելով Ինքնուրույն հետազոտել, ուսումնասիրել ՋՋ համակարգի տեխնիկական վիճակը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում իրականացնել ՋՋ համակարգի բարելավման և վերակառուցման կապիտալ բնույթի աշխատանքները:

3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, զանգվածային անկարգությունները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

4. Եզրափակիչ դրույթներ

4.1 ՋՋ համակարգի կառավարման լիազոր մարմինը և/կամ Շահագործողը պատասխանատվություն չեն կրում ՋՋ համակարգի վթարի, վնասվածքի հետևանքով սանիտարապահպանական շերտագծում գտնվող Գույքին,

սանիտարապահպանական շերտագծի սահմաններում Գույքի սեփականատիրոջը կամ այլ անձանց պատճառված վնասի համար:

4.2ՋՋ համակարգի կառավարման լիազոր մարմինը և/կամ Շահագործողը պատասխանատվություն չեն կրում ՋՋ համակարգի վթարավերականգնողական և կապիտալ բնույթի վերակառուցման ու բարելավման աշխատանքների ժամանակ սանիտարապահպանական շերտագծում, ինչպես նաև դրանից դուրս գտնվող սեփականատիրոջ գույքին պատճառված վնասների համար, եթե աշխատանքներն անհնար է իրականացնել առանց այդ գույքին վնաս պատճառելու:

4.3 ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1071.1 հոդվածի համաձայն Գույքի սեփականատերը կրում է լիակատար պատասխանատվություն իր անգործությամբ կամ գործողությամբ առաջացած՝ ՋՋ համակարգի վնասվածքի, վթարի ազդեցության հետևանքով պատճառված վնասի համար:

4.4 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում իրավունքների պետական գրանցման պահից և գործում է անորոշ ժամկետով:

4.5 Իրավաբանական անձ հանդիսանալու դեպքում պետ. ռեգիստրում Գույքի սեփականատիրոջ վկայականի պատճենը:

4.6 Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, չորս նույնաբովանդակ օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

5. Կողմերի ստորագրությունները

ՋՋ համակարգի կառավարման լիազոր մարմին	Գույքի սեփականատեր
ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե	
ՀՎՀՀ՝ 02555816	
Հասցե՝ ք. Երևան Վարդանանց 13ա	
Հեռախոս՝ (+374 10) 540909	
h/h 900011567378 (AMD)	
Պաշտոնը, Ա.Ա.Հ.	
_____	_____